ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017
02.2017
03.2017
04.2017
05.2017
06.2017
07.2017
08.2017
09.2017
10.2017
11.2017
Նոյեմբեր
12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Նոյեմբեր

թիվ 11 (231)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ

4 «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-183-Ն ՀՀ օրենքը

5 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-184-Ն ՀՀ օրենքը

6 «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՕ-185-Ն ՀՀ օրենքը

7 «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին ՀՕ-187-Ն ՀՀ օրենքը

8 «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-188-Ն ՀՀ օրենքը

15 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-189-Ն ՀՀ օրենքը

21 «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՕ-190-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

24 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ՄՈՐՎԻԿ», «ՈՍԿԵ ՎՏԱԿ» ՍՊԸ-ներին գրավատնային գործունեության, «ՊԼԱՏԻՆ», «ՁԻՄ» ՍՊԸ-ներին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԴԵԳԱ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության, «Կրպակ» ՍՊԸ-ի փոխանակման կետի թիվ 5 մասնաճյուղին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Մալաթիա» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 4 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 4 արտարժույթի փոխանակման կետի և 1 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 250Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

25 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 254-Ն որոշումը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստրի վարման, ռեգիստրում ներառված տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման կարգը» կանոնակարգ 6/02-ը հաստատելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 255-Ն որոշումը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների և պարտավորությունների զուտ ներկա արժեքի հաշվարկման կարգը և մեթոդները» կանոնակարգ 6/03-ը հաստատելու մասին»

32 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 256-Ն որոշումը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանելու մասին»

33 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 257-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին»

35 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՆԵՐԸ

«Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին***

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել, իսկ 3-րդ և 4-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման պայմանագրերի վրա, բացառությամբ «Բնակարանային հիպոտեկային կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի.

4) վարձակալության պայմանագրերի վրա, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պայմանագրերով նախատեսված է, որ վարձակալության օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքն անցնելու է վարձակալին:»:

Հոդված 2. Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասը «սույն օրենքով» բառերից հետո լրացնել «կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-183-Ն

---

* *ՀՀՊՏ 2008 N 47 (637), 23.07.08:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):
*** *ՀՀՊՏ 2017 N 69 (1344), 22.11.17:*

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին***

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) իրավունք ունի միակողմանիորեն լուծելու ցանկացած անձի հետ կնքված աշխատանքային, ծառայությունների մատուցման, գույքի վարձակալության և այլ պայմանագրերը: Լուծարային կառավարիչը չի կարող միակողմանիորեն լուծել բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման պայմանագրերը.»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-184-Ն

---

* *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

«Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՕ-15-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը 15-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ինտերնետային կայք՝ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ սահմանված վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն պարունակող ինտերնետային կայք:»:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը «ինտերնետային կայքում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների տրամադրած վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքի աճուրդի մասին հրապարակային ծանուցումների, որոնք էլեկտրոնային միջոցներով հրապարակված են համարվում, եթե տեղադրված են վարկերի ապահովման միջոց (հիպոտեկի առարկա) հանդիսացող և իրացման ենթակա անշարժ գույքերի վերաբերյալ ինտերնետային կայքում» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-185-Ն

---

* *ՀՀՊՏ 2003 N 56 (291), 12.11.03:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին***

Հոդված 1. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-135-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը «վճարվող տոկոսավճարները» բառերից հետո լրացնել «, բացառությամբ բանկերի և վարկային կազմակերպությունների տրամադրած արտարժութային վարկերի և արտարժույթով ներգրավված ավանդների, որոնց տոկոսագումարները վարկառուի կամ ավանդատուի ցանկությամբ վճարվում են այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը կամ տրամադրվել է վարկը, բացառությամբ Կենտրոնական բանկի սահմանած դեպքերի,» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-187-Ն

---

* *ՀՀՊՏ 2004 N 72 (371), 28.12.04:*
** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին***

Հոդված 1. «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-68 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 8-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն օրենքի և բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների, ինչպես նաև ֆինանսական խմբերի գործունեությունը կարգավորող օրենսդրության իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, ինչպես նաև համատեղ ապրող կամ միևնույն տնտեսություն վարող հետևյալ անձինք՝ ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները, ամուսնու ծնողները, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակը:

Անձինք համարվում են միևնույն տնտեսություն վարող, եթե նրանցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ նրանցից մեկի եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Կենտրոնական բանկը կարող է սահմանել միևնույն տնտեսություն վարելու չափանիշներ:»:

Հոդված 2. Օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անկախ կազմակերպաիրավական տեսակից՝ բանկերը պարտավոր են ունենալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կառավարման մարմիններ, գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ:»:

Հոդված 3. Օրենքի 21.2-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:»:

Հոդված 4. Օրենքի 21.12-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) «ա» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) անկախ գնահատական է տալիս բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.».

2) «բ» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 21.13-րդ և 21.14-րդ հոդվածներով.

---

* *ՀՀԱԺՏ 1996 N 12:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

«Հոդված 21.13. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) բացահայտում, գնահատում է բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը.

բ) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

գ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի սահմանած պարբերականությամբ խորհուրդ և գործադիր մարմին հաշվետվություն է ներկայացնում բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել բանկի ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:

Հոդված 21.14. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) ապահովում է բանկի և բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին.

բ) ապահովում է բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

գ) գնահատում է բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել բանկի համապատասխանության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:»:

Հոդված 6. Օրենքի 22-րդ հոդվածը «բանկի տնօրինության անդամները,» բառերից հետո լրացնել «ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը,» բառերով:

Հոդված 7. Օրենքի 34-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 34. Ֆինանսական գործառնություններ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող են՝

1) ընդունել ավանդներ.

2) տրամադրել վարկեր.

3) իրականացնել դրամական պահանջների զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ).

4) տրամադրել բանկային երաշխիքներ, բացել կամ իրականացնել հաշվարկներ ակրեդիտիվներով.

5) մատուցել վճարահաշվարկային ծառայություններ, այդ թվում՝ բացել, վարել, սպասարկել բանկային հաշիվներ, ներառյալ՝ բանկերի թղթակցային հաշիվները.

6) թողարկել, սպասարկել արժեթղթեր, իր անունից և իր հաշվին արժեթղթերով, ածանցյալ ֆինանսական գործիքներով գործարքներ կատարել.

7) մատուցել ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ՝ համաձայն «Արժեթղթերի շուկայի մասին»[***] Հայաստանի Հանրապետության օրենքի.

8) օրենքով սահմանված պահանջները բավարարելու դեպքում իրականացնել ներդրումային ֆոնդի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդի) պահառության գործունեություն.

9) կառավարել այլ անձանց միջոցները (հավատարմագրային (լիազորագրային) կառավարում), բացառությամբ արժեթղթերի փաթեթի, որի կառավարումն իրականացվում է սույն մասի 7-րդ կետի համաձայն.

10) գնել, վաճառել, կառավարել բանկային ոսկի, ստանդարտացված ձուլակտորներ և հուշադրամ.

11) գնել, վաճառել, փոխանակել արտարժույթ.

12) իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ).

13) ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, ոսկերչական իրեր, փաստաթղթեր և այլ արժեքներ.

14) մատուցել ֆինանսական խորհրդատվություն, բացառությամբ արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության, որն իրականացվում է սույն մասի 7-րդ կետի համաձայն.

15) ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ.

16) իրականացնել պարտքերի հավաքման հետ կապված գործողություններ.

17) իրացնել ապահովագրական վկայագրեր և (կամ) պայմանագրեր, օրենքով սահմանված կարգով իրականացնել ապահովագրական գործակալի գործառնություններ.

18) իրականացնել «Կուտակային կենսաթոշակների մասին»[****] Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվի օպերատորի գործառույթներ:

2. Կենտրոնական բանկը կարող է թույլատրել բանկերին՝ իրականացնելու սույն օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ սույն գլխով նախատեսված գործառնությունների հետ, և եթե դրանք թույլատրելը չի հակասում սույն օրենքի նպատակներին և չի վտանգում բանկերի ավանդատուների և վարկատուների շահերը: Սույն մասով նախատեսված թույլտվության տրամադրման կարգը, պայմանները, ժամկետները և մերժման հիմքերը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

3. Բանկերը կարող են կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրենց՝ սույն օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար, և որը չի հակասում սույն հոդվածով սահմանված այլ պահանջների:

4. Բանկերը չեն կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

5. Բանկը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված գործառնությունների, ինչպես նաև բանկային գործունեության բնականոն ընթացքն ապահովող այլ (օժանդակ) գործառնությունների կատարումն ամբողջությամբ կամ մասամբ կարող է որոշակի ժամկետով կամ անժամկետ պատվիրակել այլ իրավաբանական անձանց (կոնտրագենտ):

Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված այն գործառնությունները, որոնք կարող են իրականացվել բացառապես որոշակի լիցենզիայի կամ հատուկ այլ թույլտվության առկայության պարագայում, չեն կարող պատվիրակվել, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրակման արդյունքում էականորեն կբարձրանա բանկի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, կնվազի տվյալ գործառնության գծով բանկի ծախսատարությունը, ինչպես նաև կբարձրանա մատուցվող ծառայության որակը: Սույն պարբերությամբ նշված գործառնությունները կարող են պատվիրակվել միայն համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ունեցող անձի:

[***] *ՀՀՊՏ 2007 N 53 (577), 31.10.07:*
[****] *ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված գործառնությունների պատվիրակման համար բանկը պետք է ստանա Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը: Կենտրոնական բանկի նախնական համաձայնության տրամադրման կարգը, պայմանները և ժամկետները, ինչպես նաև համաձայնության մերժման հիմքերը սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով:

Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացման՝ գործառնությունների պատվիրակման գործարքն առ ոչինչ է:

7. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով կարող է սահմանվել սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված նախնական համաձայնության ստացման պարզեցված ընթացակարգ:

8. Կենտրոնական բանկը կարող է որոշակի ժամկետով կամ անժամկետ սահմանափակել սույն հոդվածի 5-րդ մասում նշված գործառնությունների պատվիրակումը, եթե պատվիրակումը վտանգում կամ կարող է վտանգել բանկի, բանկի հաճախորդների, այլ պարտատերերի շահերը կամ ֆինանսական համակարգի կայունությունը կամ կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

9. Բանկի նկատմամբ սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված վերահսկողության, ստուգման, վերստուգման, ուսումնասիրությունների իրականացման վերաբերյալ դրույթները տարածվում են նաև կոնտրագենտների վրա՝ սույն հոդվածի 5-րդ մասով նշված գործառնությունների իրականացման մասով: Ընդ որում, կոնտրագենտի կողմից Կենտրոնական բանկի վերահսկողության իրականացման խոչընդոտումը կարող է դիտվել նաև որպես բանկի կողմից ստուգման խոչընդոտում՝ առաջացնելով օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն բանկի նկատմամբ:

10. Սույն հոդվածի 5-րդ մասում նշված գործառնությունների պատվիրակման դեպքում բանկն իր հաճախորդների և երրորդ անձանց (այդ թվում՝ նաև Կենտրոնական բանկի) առջև պատասխանատվություն է կրում կոնտրագենտին պատվիրակված գործառնությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

11. Կենտրոնական բանկի գրավոր պահանջի դեպքում բանկը պարտավոր է գրության նշված ժամկետներում փոփոխել կամ լուծել կոնտրագենտի հետ կնքված պատվիրակման պայմանագիրը, եթե պատվիրակումը վտանգում կամ կարող է վտանգել բանկի, բանկի հաճախորդների, այլ պարտատերերի շահերը կամ ֆինանսական համակարգի կայունությունը կամ կարող է խոչընդոտել Կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողության իրականացմանը:»:

Հոդված 8. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի առաջին պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. Կենտրոնական բանկը կարող է պահանջել բանկից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում օտարել այլ անձի կանոնադրական կապիտալում սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ձեռք բերված իր մասնակցությունը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այդ մասնակցությունը կարող է չհիմնավորված ռիսկեր առաջացնել բանկի համար և (կամ) վտանգել բանկի հաճախորդների և (կամ) սպառողների շահերը և (կամ) խոչընդոտել բանկի նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև տվյալ բանկի ֆինանսական վիճակը, կարող է սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով ձեռք բերված մասնակցությունն առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն մասով սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով:».

3) 5-րդ մասը «Սույն հոդվածի» բառերից հետո լրացնել «3.1-ին մասով սահմանված ժամկետում, ինչպես նաև» բառերով:

Հոդված 9. Օրենքի 36-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-4.3-րդ մասերով.

«4.1. Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել բանկի կողմից շահութաբաժիններ բաշխելը, այդ թվում՝ արտոնյալ բաժնետերերին կամ բանկի այլ մասնակիցների այլ ձևով որևէ եկամուտներ (հատուցումներ) վճարելը, եթե՝

ա) շահութաբաժինների բաշխումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)

բ) շահութաբաժինների բաշխման հետևանքով բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

գ) բանկը խախտել է կամ շահութաբաժինների բաշխման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

4.2. Շահութաբաժինների բաշխումը սահմանափակելու կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

4.3. Բանկերը շահութաբաժինների վճարման մասին նախապես ծանուցում են Կենտրոնական բանկին: Ծանուցման կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:»:

Հոդված 10. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 37.1-ին հոդվածով.

«Հոդված 37.1. Պարգևատրումների և խրախուսական այլ վճարումների վճարման սահմանափակումը

1. Կենտրոնական բանկը կարող է սահմանափակել բանկի կողմից պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարումը, եթե՝

ա) պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարումը կհանգեցնի կամ կարող է հանգեցնել բանկի ֆինանսական վիճակի վատթարացման, և (կամ)

բ) պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարման հետևանքով բանկը խախտում է կամ կարող է խախտել առնվազն մեկ տնտեսական նորմատիվ, և (կամ)

գ) բանկը խախտել է կամ պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարման արդյունքում կխախտի հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) սահմանված շեմը (շեմերը):

2. Պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարումը սահմանափակելու կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:

3. Բանկերը պարգևատրումների և այլ խրախուսական վճարումների (հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ և այլն) վճարման մասին նախապես ծանուցում են Կենտրոնական բանկին: Ծանուցման կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:»:

Հոդված 11. Օրենքի 44-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկային գործունեության հետևյալ հիմնական տնտեսական նորմատիվները.

ա) բանկի կանոնադրական հիմնադրամի և ընդհանուր կապիտալի նվազագույն չափերը.

բ) բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը (նորմատիվները).

գ) բանկի իրացվելիության նորմատիվը (նորմատիվները).

դ) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

ե) բանկի հետ կապված անձի, անձանց գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

զ) բանկի պարտատերերի գծով ռիսկի առավելագույն չափը (չափերը).

է) Կենտրոնական բանկում տեղաբաշխվող պարտադիր պահուստների նվազագույն չափը (չափերը).

ը) արտարժույթի տնօրինման նորմատիվը (նորմատիվները).

թ) կապիտալի և ակտիվների (այդ թվում՝ հետհաշվեկշռային) սահմանային հարաբերակցության չափը (չափերը) (լևերիջի նորմատիվ).

ժ) պահանջի և գրավի արժեքի սահմանային հարաբերակցության չափը (չափերը).

ժա) հաճախորդի պարտավորության և եկամտի սահմանային հարաբերակցության չափը (չափերը):».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, հաշվարկման կարգը, հաշվարկում մասնակցող ու հաշվարկից նվազեցվող տարրերի կազմն ու հաշվարկում մասնակցող տարրերի սահմանաչափերը սահմանում է Կենտրոնական բանկը».

3) 4-րդ մասը «բարձր ռիսկայնություն ունեցող ոլորտներում» բառերից հետո լրացնել «, կամ եթե բանկը Կենտրոնական բանկի կողմից համարվում է համակարգային նշանակություն ունեցող բանկ» բառերով.

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ և 6-րդ մասերով.

«5. Բանկը Կենտրոնական բանկի կողմից համարվում է համակարգային նշանակություն ունեցող, եթե այդ բանկի ֆինանսական վիճակի վատթարացումը կամ անվճարունակությունը, կամ սնանկությունը, կամ լուծարումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա ունեցած էական բացասական ազդեցությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով տվյալ բանկի մեծությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հետ փոխկապակցվածությունը, բանկի կողմից մատուցվող ծառայությունների փոխարինելիությունը, բանկի կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, բարդությունը և (կամ) ռիսկայնությունը:

6. Կենտրոնական բանկը, հիմք ընդունելով սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափանիշները, սահմանում է բանկերը՝ համակարգային նշանակություն ունեցող համարելու կարգը:»:

Հոդված 12. Օրենքի 45-րդ, 47-50-րդ և 52-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասից հանել «սույն» բառը:

Հոդված 14. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 54.1-ին հոդվածով.

«*Հոդված 54.1.* Հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) շեմը (շեմերը)

1. Բանկերի գործունեության կարգավորման, բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման նպատակով Կենտրոնական բանկը կարող է բանկերի կամ առանձին բանկի համար սահմանել հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) շեմ (շեմեր):

2. Սույն հոդվածի առաջին մասով սահմանված՝ հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերից բարձր (ցածր) շեմի (շեմերի) հաշվարկման կարգը սահմանում է Կենտրոնական բանկը:»:

Հոդված 15. Օրենքի 57-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 17. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածով խմբագրվող 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերի:

2. Սույն օրենքի 7-րդ հոդվածով խմբագրվող 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերն ուժի մեջ են մտնում սույն օրենքի պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո:

3. Մինչև սույն օրենքի 7-րդ հոդվածով խմբագրվող 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերի ուժի մեջ մտնելը պատվիրակված գործառնությունների համար բանկը Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունն ստանալու համար պետք է դիմի սույն օրենքի 7-րդ հոդվածով խմբագրվող 34-րդ հոդվածի 5-11-րդ մասերի ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: Այդ ժամկետի ավարտից հետո պատվիրակման նախնական համաձայնություն ստանալու համար չդիմած բանկերի՝ գործառնությունների պատվիրակման պայմանագրերը դադարում են:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-188-Ն

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածում՝

1) 5-րդ կետը «Ընկերության» բառից հետո լրացնել «կամ օտարերկրյա ապահովագրական ընկերության» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-րդ կետով.

«28) ***համակարգային նշանակություն ունեցող ապահովագրական ընկերություն*** Ընկերությունը Կենտրոնական բանկի կողմից համարվում է համակարգային նշանակություն ունեցող, եթե այդ ընկերության ֆինանսական վիճակի վատթարացումը կամ անվճարունակությունը, կամ սնանկացումը, կամ լուծարումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի և (կամ) տնտեսության այլ հատվածների վրա ունեցած էական բացասական ազդեցությունը գնահատվում է՝ հիմք ընդունելով տվյալ Ընկերության մեծությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի այլ մասնակիցների հետ փոխկապվածությունը, Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների փոխարինելիությունը, Ընկերության կողմից իրականացվող գործառնությունների բնույթը, բարդությունը և (կամ) ռիսկայնությունը: Կենտրոնական բանկը, հիմք ընդունելով սույն կետով սահմանված չափանիշները, սահմանում է Ընկերությունները համակարգային նշանակություն ունեցող համարելու կարգը»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Միևնույն ընտանիքի անդամ են համարվում ամուսինը, ինչպես նաև համատեղ ապրող կամ միևնույն տնտեսություն վարող հետևյալ անձինք՝ ծնողները, տատը, պապը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրը ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները, ամուսնու ծնողները, ամուսնու՝ 18 տարին լրացած զավակը: Անձինք համարվում են միևնույն տնտեսություն վարող, եթե նրանցից մեկի ֆինանսական վիճակի վատթարացումը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել մյուսի ֆինանսական վիճակի վատթարացման, կամ նրանցից մեկի եկամուտը կամ ֆինանսական այլ միջոցները օգտագործվում են կամ կարող են օգտագործվել համատեղ ծախսերի կամ մյուսի ծախսերի ֆինանսավորման նպատակով:

Կենտրոնական բանկը կարող է սահմանել միևնույն տնտեսություն վարելու չափանիշներ:»:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը «պատասխանատու ակտուարը,» բառերից հետո լրացնել «ռիսկերի կառավարման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձը, համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը,» բառերով.

2) 4-րդ մասի 1-ին նախադասության «ներքին աուդիտի ղեկավար ու պատասխանատու ակտուար» բառերը փոխարինել «ներքին աուդիտի ղեկավար, պատասխանա-

---

* *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

տու ակտուար, ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ» բառերով.

3) 4-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ընկերության կառավարման մարմինների անդամների, գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի ղեկավարի, պատասխանատու ակտուարի, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց պաշտոնները թափուր մնալու դեպքում Ընկերությունը պարտավոր է 90-օրյա ժամկետում սույն օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով նշանակել կառավարման մարմինների անդամներ, գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ղեկավար, պատասխանատու ակտուար, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձանց:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Ընկերության ներքին հսկողության համակարգի նվազագույն պահանջներ:»:

Հոդված 4. Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող՝ Ընկերության մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարի հետևյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումը ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:»:

Հոդված 5. Օրենքի 29-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 10-րդ և 11-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) Ընկերության արտաքին աուդիտոն իրականացնող անձին ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնելը, Ընկերության արտաքին աուդիտոն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

11) գործարար վարվելակերպի կանոնների սահմանումը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Խորհուրդը պատասխանատու է Ընկերությունում ներքին հսկողության արդյունավետ համակարգ ապահովելու համար:»:

Հոդված 6. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «Ներքին աուդիտի անդամ» բառերը փոխարինել «Ներքին աուդիտի ղեկավար և անդամ» բառերով.

2) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) անկախ գնահատական է տալիս Ընկերության ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Ընկերության կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ.».

3) 2-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

4) 9-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ներքին աուդիտի կողմից սույն մասով նշված պարտականությունների կատարումը չի կարող վերջինիս համար որևէ բացասական հետևանք կամ պարտավորություն առաջացնել:»:

Հոդված 7. Օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Պատասխանատու ակտուարի կողմից սույն մասով նշված պարտականությունների կատարումը չի կարող վերջինիս համար որևէ բացասական հետևանք կամ պարտավորություն առաջացնել:»:

Հոդված 8. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 36.1-ին և 36.2-րդ հոդվածներով.

«Հոդված 36.1. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Ընկերության ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) բացահայտում, գնահատում է Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Ընկերության ռիսկի ընդհանուր նկարագիրը.

բ) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը.

գ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ խորհուրդ և գործադիր մարմին հաշվետվություն է ներկայացնում Ընկերության ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Ընկերության ռիսկերի կառավարման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:

Հոդված 36.2. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

1. Ընկերության համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) ապահովում է Ընկերության և Ընկերության աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին.

բ) ապահովում է Ընկերությունում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը.

գ) գնահատում է Ընկերության գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրա հետ կապված հնարավոր ռիսկերը.

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

2. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով կարող են սահմանվել Ընկերության համապատասխանության ապահովման գործառույթի արդյունավետ իրականացման նվազագույն պահանջներ:»:

Հոդված 9. Օրենքի 37-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Արտաքին աուդիտի կողմից սույն մասով նշված պարտականությունների կատարումը չի կարող վերջինիս համար որևէ բացասական հետևանք կամ պարտավորություն առաջացնել:»:

Հոդված 10. Օրենքի 58-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «տարրերի կազմը» բառերը փոխարինել «տարրերի կազմն ու սահմանաչափերը» բառերով.

2) 4-րդ մասը «ոլորտներում» բառից հետո լրացնել «, կամ եթե Ընկերությունը համարվում է համակարգային նշանակություն ունեցող Ընկերություն» բառերով.

3) 5-րդ մասից հանել «սույն» բառը:

Հոդված 11. Օրենքի 59-րդ հոդվածի 1-3-րդ մասերը, 61-66-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 12. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի «Ընկերությունը պարտավոր է ձևավորել հետևյալ տեխնիկական պահուստները» բառերը փոխարինել «Կենտրոնական բանկը կարող է սահմանել հետևյալ տեխնիկական պահուստները» բառերով.

2) 3-րդ մասի «Բացի սույն հոդվածի 2-րդ մասում նշված պահուստներից» բառերը փոխարինել «Բացի Կենտրոնական բանկի կողմից սահմանված տեխնիկական պահուստներից» բառերով.

3) 4-րդ մասի «Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահուստների» բառերը փոխարինել «Տեխնիկական պահուստների» բառերով, իսկ «ըստ ապահովագրության տեսակների» բառերը՝ «ըստ ապահովագրության ձևերի, տեսակների» բառերով.

4) 5-րդ մասի «միևնույն տեսակի» բառերը փոխարինել «միևնույն ձևի, տեսակի» բառերով:

Հոդված 13. Օրենքի 70-74-րդ հոդվածներն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 14. Օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասի «բանկն իր նորմատիվ իրավական ակտերով» բառերը փոխարինել «բանկը» բառով:

Հոդված 15. Օրենքի 80-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին մասով.

«5.1. Կենտրոնական բանկը կարող է պահանջել Ընկերությունից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում օտարել այլ անձի կանոնադրական կապիտալում սույն հոդվածով սահմանված կարգով ձեռք բերված իր մասնակցությունը, եթե Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով այդ մասնակցությունը կարող է չհիմնավորված ռիսկեր առաջացնել Ընկերության համար և (կամ) վտանգել ապահովադիրների, ապահովագրված անձանց կամ շահառուների շահերը և (կամ) խոչընդոտել Ընկերության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև տվյալ ընկերության ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերից առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն մասով սահմանված ժամկետը երկարաձգել ևս վեց ամսով:».

2) 7-րդ մասի վերջին պարբերության «Սույն մասով սահմանված ժամկետում Ընկերության կողմից հիշյալ մասնակցությունը չօտարվելու դեպքում,» բառերը փոխարինել «Սույն մասով, ինչպես նաև սույն հոդվածի 5.1-ին մասով սահմանված ժամկետներում Ընկերության կողմից համապատասխան մասնակցությունը չօտարվելու դեպքում» բառերով:

Հոդված 16. Օրենքի 88-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սպառողների շահերի պաշտպանության, ինչպես նաև ապահովագրական խարդախությունների կանխարգելման նպատակով Կենտրոնական բանկը կարող է նորմատիվ իրավական ակտերով պահանջներ սահմանել ապահովագրական միջնորդների կողմից ապահովագրության պայմանագրերի կնքման, փոփոխության, պայմանագրերի սպասարկման գործընթացի, ինչպես նաև ապահովագրական միջնորդների գործունեության, վարվելակերպի կանոնների և ներքին հսկողության համակարգերի նկատմամբ:»:

Հոդված 17. Օրենքի 126-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ապահովագրական պորտֆելի» բառերը փոխարինել «ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող Ընկերության ապահովագրական պորտֆելի» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Կենտրոնական բանկը կյանքի ապահովագրություն իրականացնող Ընկերության ապահովագրական պորտֆելի փոխանցման դիմումն ստանալուց հետո՝ հինգ

աշխատանքային օրվա ընթացքում, ապահովագրական պորտֆելի նախատեսվող փոխանցման վերաբերյալ հայտարարություն է հրապարակում Կենտրոնական բանկի պաշտոնական կայքում, ինչպես նաև http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Նշված հայտարարության մեջ նշվում է, որ հայտարարության հրապարակումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, ապահովադիրները, որոնց հետ կնքված ապահովագրության պայմանագրերը նախատեսվում է փոխանցել այլ Ընկերության, կարող են գրավոր Կենտրոնական բանկ ներկայացնել ապահովագրական պորտֆելի փոխանցման վերաբերյալ իրենց առարկությունները: Միևնույն ժամկետում փոխանցող Ընկերությունն ապահովագրական պորտֆելի նախատեսվող փոխանցման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցում է ուղարկում ապահովադիրներին՝ ծանուցմանը կցելով Կենտրոնական բանկի հայտարարությունը:

1.2. Կենտրոնական բանկը կյանքի ապահովագրություն իրականացնող Ընկերության ապահովագրական պորտֆելի փոխանցման դիմումը բավարարում կամ մերժում է սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված երկամսյա ժամկետի ավարտից հետո՝ 30-օրյա ժամկետում: Ապահովադիրներից ստացած առարկությունները հիմք չեն ապահովագրական պորտֆելի փոխանցման մերժման համար, սակայն Կենտրոնական բանկը որոշմամբ անդրադառնում է նաև ապահովագրական պորտֆելի փոխանցման վերաբերյալ ապահովադիրներից ստացված առարկություններին և հիմնավորում այդ առարկությունները չընդունելու պատճառները:»:

Հոդված 18. Օրենքի 127-րդ հոդվածի 1-ին մասը «ինչպես նաև պատվիրված նամակով ծանուցում ուղարկել ապահովադիրներին՝ նրանց մշտական բնակության հասցեով» բառերը փոխարինել «ինչպես նաև օրենքով սահմանված կարգով ծանուցում ուղարկել ապահովադիրներին» բառերով:

Հոդված 19. Օրենքի 138-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվներից՝ արտահերթ՝ սույն հոդվածի 2-րդ մասի 2-8-րդ կետերով սահմանված հերթականությամբ:

Եթե ապահովագրության պայմանագրերից բխող պահանջների արժեքը գերազանցում է Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունը, ապա գերազանցող մասը բավարարվում է սույն հոդվածով՝ ապահովագրության պայմանագրերից բխող համապատասխան պահանջների բավարարման համար նախատեսված հերթում: Եթե Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունն է գերազանցում պահանջների արժեքը, ապա գերազանցող մասը ընդգրկվում է լուծարային միջոցների կազմում և օգտագործվում է օրենքով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Ընկերության պարտավորությունները մարվում են լուծարային միջոցների հաշվին հետևյալ հերթականությամբ.

1) առաջին՝ լուծարային հանձնաժողովի կողմից սույն օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ լուծարային հանձնաժողովի նախագահի և անդամների աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները.

2) երկրորդ՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

3) երրորդ՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ.

4) չորրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

5) հինգերորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ.

6) վեցերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող՝ անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

7) յոթերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջները.

8) ութերորդ՝ առաջինից յոթերորդ հերթերում չընդգրկված ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները.

9) իններորդ՝ առաջինից ութերորդ, տասներորդ-տասներկուերորդ հերթերում չընդգրկված այլ պահանջներ.

10) տասներորդ՝ պետական բյուջեի և համայնքային բյուջեների նկատմամբ Ընկերության պարտավորությունները.

11) տասնմեկերորդ՝ ստորադաս փոխառություններից բխող պահանջները.

12) տասներկուերորդ՝ Ընկերության մասնակիցների պահանջները:».

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ Ընկերության պարտատերերի պահանջների բավարարման հերթականության երկրորդից իններորդ և տասնմեկերորդ հերթերով սահմանված պարտատերերի թվից բացառություն են կազմում Ընկերության մասնակիցները և Ընկերության հետ փոխկապակցված անձինք, որոնց նկատմամբ Ընկերության պարտավորությունները բավարարվում են տասներկուերորդ հերթում:».

4) 9-րդ մասի «2-րդ կետի» բառերը փոխարինել «2-8-րդ կետերում» բառերով:

Հոդված 20. Օրենքի 142-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 21. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-189-Ն

«Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին***

Հոդված 1. «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի նոյեմբերի 6-ի ՀՕ-262 օրենքի 31-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվներից՝ արտահերթ՝ հետևյալ հերթականությամբ.

1) առաջին՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

2) երկրորդ՝ պարտադիր ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ.

3) երրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրերից բխող անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

4) չորրորդ՝ կամավոր ապահովագրության պայմանագրից բխող այլ պահանջներ.

5) հինգերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող՝ անձի կյանքին ու առողջությանը պատճառված վնասից առաջացած պահանջները.

6) վեցերորդ՝ վերաապահովագրության ընդունած (ստանձնած) ռիսկերի գծով վերաապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ.

7) առաջինից վեցերորդ հերթերում չընդգրկված ապահովագրության պայմանագրերից բխող այլ պահանջներ:

Եթե ապահովագրության պայմանագրերից բխող պահանջների արժեքը գերազանցում է Ընկերության տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունը, ապա գերազանցող մասը բավարարվում է սույն հոդվածով՝ ապահովագրության պայմանագրերից բխող համապատասխան պահանջների բավարարման համար նախատեսված հերթում: Եթե տեխնիկական պահուստներին համարժեք ակտիվների մեծությունն է գերազանցում պահանջների արժեքը, ապա գերազանցող մասն ընդգրկվում է լուծարային միջոցների կազմում և օգտագործվում է օրենքով սահմանված կարգով:».

2) 2-րդ մասի «գ» ենթակետի երկրորդ նախադասության «իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է կյանքի ապահովագրություն, և ոչ կյանքի ապահովագրական պայմանագրերից բխող պահանջները, եթե ապահովագրական ընկերությունն իրականացնում է ոչ կյանքի ապահովագրություն» բառերը փոխարինել «իսկ ապահովագրական ընկերությունների լուծարման դեպքում՝ ապահովագրության պայմանագրերից բխող պահանջները, որոնք բավարարվում են սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված հերթականությամբ» բառերով.

3) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության

---

* *ՀՀՊՏ 2001 N 40 (172), 15.12.01:*

** *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է 2017 թվականի հոկտեմբերի 25-ին (ՀՀՊՏ N 69 (1344), 22.11.17):

ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված դեպքերում Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցված գումարի չափով Բյուրոն պահանջի իրավունք է ձեռք բերում ապահովագրական ընկերության նկատմամբ այն հերթում (հերթերում), որի ընթացքում տվյալ տուժողը (պարտատերը), համաձայն սույն հոդվածի, իրավունք կունենար բավարարելու իր պահանջը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
13 նոյեմբերի 2017 թ., Երևան, ՀՕ-190-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ՄՈՐՎԻԿ», «ՈՍԿԵ ՎՏԱԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 243Ա, 245Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՊԼԱՏԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 244Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԴԵԳԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիան (որոշում թիվ 247Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ՋԻՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 265Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Կրպակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխանակման կետի թիվ 5 մասնաճյուղին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիան (որոշում թիվ 266Ա):
- ***Հաշվառվել է*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Մալաթիա» մասնաճյուղը (որոշում թիվ 267Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 1670000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/864Ա, 1/882, 1/931Ա, 1/937Ա) և 4 արտարժույթի փոխանակման կետի, 1 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/864Ա, 1/877Ա. 1/880Ա, 1/894Ա, 1/895Ա):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2017 թ. նոյեմբերի 14-ի թիվ 250Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6. 0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

*«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստրի վարման, ռեգիստրում ներառված տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման կարգը» կանոնակարգ 6/02-ը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը և 3-րդ մասի 4-րդ կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների ռեգիստրի վարման, ռեգիստրում ներառված տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացման կարգը» կանոնակարգ 6/02-ը՝ համաձայն սույն որոշման հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 նոյեմբերի 2017 թ., N 254-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 254-Ն որոշմամբ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 6/02

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ, ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված ապահովման միջոցների ռեգիստրի (այսուհետ՝ ռեգիստր) վարման, այդ թվում՝ թողարկողի կողմից ռեգիստրում ներառված տեղեկությունների՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացման կարգը:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.11. 2017 թ. (ՀՀԳՏ N32 (601), 01.12.2017):

ԳԼՈՒԽ 2. ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՁԵՎԸ

2. Ռեգիստրը վարվում է էլեկտրոնային եղանակով:

ԳԼՈՒԽ 3. ՌԵԳԻՍՏՐԻ ՊԱՇՏՊԱՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

3. Ռեգիստրը պետք է պաշտպանված լինի չթույլատրված օգտագործումից, ներառյալ դրա չթույլատրված փոփոխությունը կամ ոչնչացումը:

ԳԼՈՒԽ 4. ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՌԵԳԻՍՏՐՆԵՐ

4. Ապահովված պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար վարվում է առանձին ռեգիստր: Յուրաքանչյուր ռեգիստրը պետք է պարունակի թողարկողի անվանումը և «ապահովման միջոցների ռեգիստր» բառակապակցությունը:

5. Ապահովման միջոցների ռեգիստրը բաղկացած է հիմնական ռեգիստրից և ածանցյալ գործիքների ռեգիստրից (առկայության դեպքում):

ԳԼՈՒԽ 5. ՌԵԳԻՍՏՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

6. Արգելվում է ռեգիստր մուտքագրված տեղեկությունները փոփոխել, բացառությամբ հայտնաբերված սխալների ուղղման դեպքերի:

7. Թողարկողը պետք է ներդնի ռեգիստրի վարման տեխնիկական և կազմակերպական այնպիսի միջոցներ, որոնք թույլ կտան ցանկացած ժամանակ վերականգնել ինչպես տվյալների սկզբնական տարբերակը, այնպես էլ կատարված յուրաքանչյուր փոփոխություն:

ԲԱԺԻՆ 2. ՌԵԳԻՍՏՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

8. Ռեգիստրը պետք է վարվի այնպես, որ՝

1) ցանկացած պահի հնարավոր լինի դրանում գրանցված տեղեկատվությունը ամբողջական ձևով դիտարկել էկրանի վրա կամ վերածել թղթային տարբերակի.
2) ցանկացած պահի հնարավոր լինի դրանում պարունակվող ամբողջական տեղեկատվության ստուգումը:

ԳԼՈՒԽ 7. ՌԵԳԻՍՏՐԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

9. Ռեգիստրի վարման համար օգտագործվող տեղեկատվական համակարգերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին.

1) դրանք օգտագործվում են միայն համապատասխան թույլտվություն ունեցող օգտագործողների կողմից,
2) օգտագործման իրավասությունների պատվիրակումը գրանցվում, կառավարվում և ստուգվում է համակարգի կողմից,
3) ռեգիստր բոլոր մուտքերը (տվյալների մուտքագրում, դիտարկում, փոփոխություն, ջնջում և այլն) գրանցվում են,
4) օգտագործվող համակարգերը կարող են վերականգնվել առանց անվտանգության ռիսկերի,
5) ռեգիստրում պարունակվող ցանկացած տվյալի կեղծումը հնարավոր է անմիջապես բացահայտել տեխնիկական ստուգման միջոցով, և
6) համակարգում տեղի ունեցող սխալները կամ անսարքությունները անմիջապես զեկուցվում են:

10. Թողարկողը պետք է պահի յուրաքանչյուր ռեգիստրի մեկ ամբողջական կրկնօրինակ, որը պետք է պահվի այլ կրիչի վրա և թարմացվի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում:

ԲԱԺԻՆ 3. ՌԵԳԻՍՏՐՈՒՄ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ԳԼՈՒԽ 8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11.Արգելվում է ռեգիստրում հետին ամսաթվով գրառումների կատարումը: Ակտիվը կարող է գրանցվել ռեգիստրում միայն դրա նկատմամբ սահմանված պահանջները բավարարելու դեպքում:

12. Ապահովման միջոցներում ներառված ակտիվը ռեգիստրում գրանցվում է հերթական համարով: Ռեգիստրից ակտիվի հեռացումից հետո դրա համարը չի կարող կրկին օգտագործվել:

ԳԼՈՒԽ 9. ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԱԳՐՈՒՄԸ ՌԵԳԻՍՏՐ

13. Ռեգիստրը պարունակում է հիփոթեքային վարկերի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝
1) վարկային պայմանագրի կնքման ամսաթիվը,
2) պայմանագրի համարը,
3) վարկի գրանցման համարը, վարկի նույնականացման համարը,
4) վարկի գումարը,
5) վարկի տոկոսադրույքը, տոկոսադրույքի տեսակը (հաստատուն կամ լողացող), լողացող տոկոսադրույքի հղման դրույքը,
6) վարկի արժույթը,
7) վարկի ժամկետը,
8) վարկի գումարի և տոկոսների մարման գրաֆիկը,
9) վարկի մնացորդային արժեքը,
10) վարկի գումարի և գրավի առարկայի արժեքի հարաբերակցությունը,
11) փոխառուի անունը, ազգանունը, անձը նույնականացնող փաստաթղթի համարը, հանրային ծառայությունների համարանիշը, հաշվառման և բնակության հասցեները,
12) վարկերի ապահովություն հանդիսացող գրավի նկարագրությունը, այդ թվում՝
    ա. գտնվելու վայրը (հասցեն),
    բ. գույքի տեսակը, օգտագործման նպատակը,
    գ. շինության հարկը (հարկայնությունը),
    դ. շուկայական արժեքը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով այլ արժեքները գնահատված լինելու դեպքում՝ նաև գնահատված այլ արժեքները,
    ե. գույքի կադաստրային համարը,
    զ. հողամասի կառուցապատման իրավունքի կադաստրային համարը,
    է. հողամասի կառուցապատման իրավունքի իրականացման վայրը և գործողության ժամկետը,
    ը. գույքի ծանրաբեռնման (գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակումների) տեսակը,
    թ. հողամասի, շենքի կամ բնակարանի մակերեսը (քառակուսի մետրերով),
13) ֆինանսական երաշխիքները, անձնական երաշխավորները, այլ երաշխավորությունները:

14. Ռեգիստրը պարունակում է փոխարինող և լրացուցիչ ակտիվների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝
1) ակտիվի տեսակը,
2) շուկայական արժեքը,
3) անվանական արժեքը:

15. Ռեգիստրը պարունակում է ածանցյալ գործիքների վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝
1) տեսակը՝ ֆորվարդ, ֆյուչերս, սվոպ, ապագա տոկոսադրույքի մասին համաձայնություն, օպցիոն, այլ,
2) գործարքի գումարը,
3) կնքման օրը և կատարման ժամկետը,
4) կոնտրագենտի անվանումը և հասցեն:

16. Ռեգիստրում ներառված տեղեկությունները (դրանց փոփոխությունները) Կենտրոնական բանկ են ներկայացվում էլեկտրոնային եղանակով՝ Սի-Բի-էյ Նեթ համակարգով, ըստ Կենտրոնական բանկի տրամադրած ֆայլի:

«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների և պարտավորությունների զուտ ներկա արժեքի հաշվարկման կարգը և մեթոդները» կանոնակարգ 6/03-ը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների և պարտավորությունների զուտ ներկա արժեքի հաշվարկման կարգը և մեթոդները» կանոնակարգ 6/03-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 նոյեմբերի 2017 թ., N 255-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 255-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 6/03

ԱՊԱՀՈՎՎԱԾ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶՈՒՏ ՆԵՐԿԱ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցներ հանդիսացող ակտիվների և պարտավորությունների զուտ ներկա արժեքի հաշվարկման կարգը և մեթոդները, այդ թվում՝ ներքին մոդելների նկատմամբ պահանջները, սթրես թեստերի իրականացման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ՓԱՍՏԱՑԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՀՍԿՈՂԻՆ

2. Ապահովված պարտատոմսերի թողարկողը յուրաքանչյուր շաբաթ հսկողին է տրամադրում փաստացի ընդհանուր դրամական հոսքերի ժամանակացույցը, ինչպես նաև վաղաժամկետ մարումների և չվճարումների մասին տեղեկատվությունը: Սույն կետով սահմանված ժամանակացույցում նշված դրամական

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.11. 2017 թ. (ՀՀԳՏ N32 (601), 01.12.2017):

հոսքերի մասին տեղեկությունները պետք է հնարավորություն ընձեռեն նույնականացնելու այն ակտիվները, ներառյալ՝ հիփոթեքային վարկերը, փոխարինող ակտիվները և ածանցյալ գործիքները, որոնցից ստացվել են այդ դրամական հոսքերը:

3. Թողարկողը պետք է հսկողին տրամադրի անհրաժեշտ հաշվետվական գործիքներ՝ ըստ վարկերի տարբեր բնութագրիչների անհատական դրամական հոսքերի խմբավորման և վերլուծության համար:

ԳԼՈՒԽ 3. ԱՊԱԳԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

4. Ապահովված պարտատոմսերի թողարկողը յուրաքանչյուր շաբաթ հսկողին է տրամադրում սպասվող ընդհանուր դրամական հոսքերի ժամանակացույցը, որը պետք է հաշվի առնի վաղաժամկետ վճարումները և չվճարումները:

5. Թողարկողը պարտավոր է օգտագործել Կենտրոնական բանկի կողմից տրամադրված՝ վաղաժամկետ մարումների և չվճարումների (փոխարինումների) պարամետրեր կամ մշակել ներքին մոդելներ՝ ապագա դրամական հոսքերի գնահատման համար: Վաղաժամկետ մարումների և չվճարումների (փոխարինումների) ներքին մոդելները պետք է համապատասխանեն սույն կանոնակարգով սահմանված նվազագույն պահանջներին և ենթակա են համաձայնեցման Կենտրոնական բանկի հետ:

ԳԼՈՒԽ 4. ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ՄԱՐՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ

6. Վաղաժամկետ մարումների ներքին մոդելները պետք է հաշվի առնեն առնվազն հետևյալ գործոնները.

- տոկոսադրույքի կանխատեսում (այդ թվում՝ սցենարային վերլուծություններ, սիմուլյացիաներ)՝ կանխատեսելով եկամտաբերության կորը,
- վարքագծային ենթադրություններ,
- վաղաժամկետ մարման տրանզակցիոն ծախսերի ենթադրություններ, ներառյալ՝ իրավական ծախսեր և փոխհատուցումներ,
- վարկի տարիքը,
- փաստացի և կանխատեսվող կանոնավոր ամորտիզացիաներ, ինչպես նաև փաստացի ոչ կանոնավոր (մասնակի) վաղաժամկետ մարումներ,
- անշարժ գույքի գների մակարդակը և փոփոխությունը,
- փոխառության/վարկի գումարը,
- վարկի գումարի և գրավի արժեքի հարաբերակցությունը,
- արժեկտրոնը և հավելավճարը վարկի տրամադրման պահին,
- տնտեսական ցուցանիշների կանխատեսումներ, ինչպիսիք են՝ գործազրկությունը, համախառն ազգային եկամուտը և այլն:

ԳԼՈՒԽ 5. ՉՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ (ՓՈԽԱՐԻՆՈՒՄՆԵՐԻ) ՆԵՐՔԻՆ ՄՈԴԵԼՆԵՐ

7. Չվճարումների (փոխարինումների) ներքին մոդելը, ի լրումն սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված գործոնների, պետք է հաշվի առնի առնվազն հետևյալ գործոնները.

1) փոխառուի վարկանիշը (սքորը),
2) զբաղվածությունը,
3) եկամտի մակարդակը, պարտքի սպասարկման ծախսերի և եկամտի մեծության հարաբերակցությունը:

ԳԼՈՒԽ 6. ՆԵՐՔԻՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

8. Գործոնն ընտրելիս (ներառյալ սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ գլուխներով նախատեսված գործոնները) հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.

- գործոնի և վաղաժամկետ մարման, չվճարման կամ փոխարինման միջև կապը պետք է լինի հիմնավորված (վիճակագրորեն նշանակալի) և կապի բնույթը պետք է համահունչ լինի տնտեսական հիմնավորումներին,
- գործոնը պետք է սահմանվի միանշանակորեն:

9. Սպասվող դրամական հոսքերի ժամանակացույցը պետք է պարունակի ոչ կանոնավոր վճարումների (վաղաժամկետ մարումներ, նման այլ իրավունքներ) հավանականություն (սպասում)՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված կամ ներքին մոդելներով ստացված:

ԳԼՈՒԽ 7. ԱԿՏԻՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՅՈՒՐԱՑԻԱՅԻ ԵՎ ԴՅՈՒՐԱՑԻԱՅԻ ճԵՂՔՎԱԾՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

10. Պահպանելով 3-6-րդ գլուխների պահանջները՝ թողարկողը պետք է որոշի ապահովման միջոցներում ներառված ակտիվների սպասվող դյուրացիան:

11. Ապահովման միջոցներով ապահովված ոչ հետկանչելի պարտավորությունների դյուրացիայի որոշման համար թողարկողը հիմք է ընդունում պայմանագրով սահմանված մարման ամսաթիվը:

12. Ապահովման միջոցներով ապահովված հետկանչման իրավունք պարունակող պարտավորությունների դյուրացիայի որոշման համար թողարկողը որպես մարման ամսաթիվ հիմք է ընդունում հետկանչման առաջին կամ վերջին ամսաթիվը, որի դեպքում ակտիվների-պարտավորությունների դյուրացիայի ճեղքվածքը ամենամեծն է:

13. Թողարկված ածանցյալները, որոնք ներառված են ապահովման միջոցներում, պետք է համարվեն իրականացված հնարավոր ամենավաղ կամ ամենաուշ ամսաթվին, որի դեպքում ակտիվների-պարտավորությունների դյուրացիայի ճեղքվածքը ամենամեծն է:

14. Սույն գլխի պահանջների համաձայն՝ թողարկողը պետք է որոշի պարտավորությունների սպասվող դյուրացիան և ապահովման միջոցների դյուրացիայի սպասվող ճեղքվածքը՝ հաշվի առնելով ակտիվները և պարտավորությունները:

15. Թողարկողը պետք է որոշի ակտիվների և պարտավորությունների սպասվող դյուրացիայի և դյուրացիայի ճեղքվածքի զգայունությունը տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ՝ հաշվի առնելով սթրես-թեստավորման համար սույն կանոնակարգով նախատեսված պարամետրերը:

ԳԼՈՒԽ 8. ԶՈՒՏ ՆԵՐԿԱ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ

16. Թողարկված ապահովված պարտատոմսերի զուտ ներկա արժեքը և ապահովման միջոցներում ներառված ակտիվների զուտ ներկա արժեքը (ճշգրտված ածանցյալ գործիքների գծով դիրքերի զուտ ներկա արժեքով) պետք է հաշվարկվի և համեմատվի միմյանց հետ՝ ապահովված պարտատոմսերի յուրաքանչյուր դասի համար առանձին, առնվազն հինգ աշխատանքային օրը մեկ անգամ: Ապահովման միջոցներում ներառված ակտիվների զուտ ներկա արժեքը ցանկացած պահի պետք է գերազանցի տվյալ դասի ապահովված պարտատոմսերի գծով պարտավորությունների զուտ ներկա արժեքի 105 տոկոսը:

17. Եթե սույն կանոնակարգի 16-րդ կետով նախատեսված ծածկույթը, այդ թվում՝ սույն կանոնակարգով նախատեսված սթրես թեստերի կիրառումից հետո, փոքր է 105 տոկոսից, ապա թողարկողը պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան չափով (սթրես թեստերի դեպքում՝ հիմք ընդունելով սիմուլյացիաների արդյունքում ստացվող ամենամեծ պակասուրդը) ավելացնել ապահովման միջոցները «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածին համապատասխան:

18. Թողարկողը ածանցյալ գործիքների զուտ ներկա արժեքը հսկողին պետք է ներկայացնի ապահովման միջոցների և պարտավորությունների զուտ ներկա արժեքից առանձին:

19. Զուտ ներկա արժեքների հաշվարկման ժամանակ կարող է օգտագործվել միայն այնպիսի եկամտաբերության կոր, որը համապատասխանում է տվյալ արժույթին: Մասնավորապես՝

1) Հայաստանի Հանրապետության դրամով արտահայտված վարկերի դեպքում օգտագործվում է Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի եկամտաբերության սփոթ կորը,
2) ԱՄՆ դոլարով արտահայտված վարկերի դեպքում հիմք է ընդունվում ԱՄՆ գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության սփոթ կորը՝ գումարած Հայաստանի Հանրապետության պետական արտարժութային պարտատոմսերի (եվրոպարտատոմսերի) եկամտաբերության սպրեդը (մեկից ավելի թողարկումների դեպքում վերցվում է սպրեդների թվաբանական միջինը),
3) այլ արժույթների դեպքում ուղենիշային կորը յուրաքանչյուր դեպքում որոշվում է Կենտրոնական բանկի կողմից:

20. Ածանցյալ գործիքները պետք է դիտարկվեն ընթացիկ շուկայական արժեքով, որը ոչ ստանդարտացված ածանցյալ գործիքների դեպքում պետք է որոշվի բավարար կազմակերպական, տեխնիկական, մասնագիտական կարողություններ ունեցող անկախ անձի կողմից:

21. Արտարժութային դիրքերի զուտ ներկա արժեքները պետք է փոխարկվեն ՀՀ դրամի Կենտրոնական բանկի հրապարակած ընթացիկ փոխարժեքով:

ԳԼՈՒԽ 9. ՍԹՐԵՍ ԹԵՍՏԵՐ

22. Թողարկողը պետք է ապահովի, որ Օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված ծածկույթն առկա է նաև տոկոսադրույքների փոփոխության դեպքում: Այդ նպատակով թողարկողը պետք է իրականացնի սթրես թեստեր սույն գլխով նախատեսված կարգով:

23. Սթրես թեստերի կիրառումից հետո զուտ ներկա արժեքների փոփոխությունը պետք է ներկայացվի հսկողին:

24. Ապահովման միջոցները կարող են նվազեցվել միայն այն դեպքում, երբ սթրես թեստերի արդյունքում զուտ ներկա արժեքով ծածկույթի պակասուրդ չի առաջանում:

25. Տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը գնահատելու համար զուտ ներկա արժեքների հաշվարկման համար օգտագործված եկամտաբերության կորերը պետք է տեղափոխվեն վերև և ներքև՝ սույն գլխով սահմանված չափով: Նոր ստացված տոկոսադրույքների կորերը օգտագործելով՝ պետք է հաշվարկվեն նոր զուտ ներկա արժեքները բոլոր բաղադրիչների համար:

26. Մարման ժամկետների քանակն ու բաշխումը համապատասխան եկամտաբերության կորի վրա պետք է ընտրվի ըստ թողարկողի գործարքի շրջանակի և կառուցվածքի, որտեղ քանակը պետք է լինի առնվազն ութը՝ ներկայացված հետևյալ ժամկետներով՝ երեք ամիս, վեց ամիս, մեկ տարի, երեք տարի, հինգ տարի, տասը տարի և քսան տարի:

27. Զուտ ներկա արժեքների վրա տոկոսադրույքների փոփոխության ազդեցությունը գնահատելու համար թողարկողն իրականացնում է հետևյալ քայլերը.

1) Ընտրված յուրաքանչյուր մարման ժամկետի համար որոշվում է տոկոսադրույքների օրական տարբերությունների ստանդարտ շեղումը՝ հիմք ընդունելով նախորդող 250 աշխատանքային օրվա դիտարկումները: Այնուհետև համապատասխան մարման ժամկետի համար հաշվարկված ստանդարտ շեղումը բազմապատկվում է 2.33 գործակցով (նորմալ բաշխման 99 տոկոս միակողմանի վստահության մակարդակին համապատասխան քվանտիլը) և 21 թվի (մեկ ամսվա աշխատանքային օրերի միջին թիվը) քառակուսի արմատով,
2) եկամտաբերության կորը տեղաշարժվում է դեպի վեր յուրաքանչյուր մարման ժամկետի համար սույն կետի 1-ին ենթակետով որոշված չափով, սակայն ոչ պակաս, քան 2 տոկոսային կետով: Դրա հիման վրա հաշվարկվում են նոր զուտ ներկա արժեքները,
3) եկամտաբերության կորը տեղաշարժվում է դեպի ներքև յուրաքանչյուր մարման ժամկետի համար սույն կետի 1-ին ենթակետով որոշված չափով, սակայն ոչ պակաս, քան 2 տոկոսային կետով: Դրա հիման վրա հաշվարկվում են նոր զուտ ներկա արժեքները:

28. Եթե սույն գլխի համաձայն եկամտաբերության կորը տեղաշարժելու արդյունքում տոկոսադրույքը ստացվում է զրոյից փոքր, ապա այն ընդունվում է զրոյին հավասար:

29. Սույն կանոնակարգի 27-րդ կետի համաձայն ստացված տոկոսադրույքները գծային մեթոդով ինտերպոլացվում են՝ նոր եկամտաբերության կորերը կառուցելու համար:

ԳԼՈՒԽ 10. ՓԱՍՏԱԹՂԹԱՎՈՐՈՒՄԸ

30. Թողարկողը պարտավոր է՝

- ունենալ գրավոր ընթացակարգեր՝ սույն կանոնակարգով նախատեսված ստանդարտ շեղման որոշման, ինչպես նաև ինտերպոլյացիայի համար,
- փաստաթղթավորել 4-6-րդ գլուխներով նախատեսված վաղաժամկետ մարումների և չվճարումների (փոխարինումների) ներքին մոդելների նկարագրությունը:

31. Թողարկողը մշտապես պետք է պահպանի սույն գլխով նախատեսված փաստաթղթերը:

ԳԼՈՒԽ 11. ՄԵԹՈԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

32. Թողարկողը կարող է փոխել հաշվարկման ընթացակարգը (այդ թվում՝ հաշվարկման մեթոդը, օգտագործվող պարամետրերը) միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ: Կենտրոնական բանկը տալիս է իր համաձայնությունը, եթե թողարկողը հիմնավորում է, որ ընթացակարգի փոփոխությունը բարելավում է արդյունքի որակը:

Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողի որակավորման կարգը և մասնագիտական համապատասխանության չափանիշները սահմանելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ապահովված հիփոթեքային պարտատոմսերի ապահովման միջոցների հսկողը պետք է բավարարի որակավորման հետևյալ պահանջներից առնվազն մեկին.

1) էյ-Սի-Սի-էյ (ACCA) որակավորման F1-F9 մակարդակներ.
2) Սի-Այ-էյ (CIA) կամ Սի-էֆ-էյ (CFA) որակավորման երկու մակարդակ.
3) Սի-Այ-էս-էյ (CISA) որակավորում:

2. Որակավորման վկայականը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ով բանկի ներքին աուդիտի ղեկավարին որակավորման վկայականի տրամադրման համար սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
21 նոյեմբերի 2017 թ., N 256-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 24.11. 2017 թ. (ՀՀԳՏ N32 (601), 01.12.2017):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով խթանել երկարաժամկետ միջոցների ներգրավումը, ինչպես նաև բանկային համակարգի կարգավորումը համապատասխանեցնել միջազգային ստանդարտներին,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ գլուխը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Կանոնակարգի 13-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,
2) Կանոնակարգի 30-րդ կետը ուժը կորցրած ճանաչել,
3) Կանոնակարգի 46-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«46. $Ն3^1$, $Ն3^2$, $Ն4^1$ և $Ն4^2$ նորմատիվների ռիսկերի հաշվարկում չեն ընդգրկվում Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերը և սույն կանոնակարգի 28.1-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հիմնական կապիտալի մեծությունից պակասեցվող տարրերը:»,

4) Կանոնակարգի Հավելված 3-ի 15-րդ կետը «ռիսկի կշիռը:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Եթե որպես ապահովվածություն հանդես է գալիս տվյալ բանկի կողմից թողարկված և կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված պարտատոմսը, ապա պահանջի ապահովված մասը ստանում է 0% ռիսկի կշիռ, ընդ որում՝ պահանջի ապահովված մասը հաշվարկվում է պարտատոմսի տվյալ օրվա շուկայական գնի հիման վրա:»,

5) Կանոնակարգի Հավելված 11-ի 2-րդ և 3-րդ կետերում ««Միգրացիայի միջազգային կազմակերպություն» (International Organization For Migration), «Կառգիլ Ֆայնանշլ Սերվիսիս Ինթերնեյշնլ Ինկ»-ից (Cargill Financial Services International Inc), «Ֆրանկֆուրտ Սքուլ Ֆայնանշլ Սերվիսիս ՋիէմԲիէյջ» (Frankfurt School Financial Services GmbH), «Աթլանթիկ Ֆորֆեյթինգ էյՋի» (Atlantic Forfaiting AG), «Գլոբալ Փարթներշիփ Ֆանդ էՍ.էՅ, ՍԻՔԱՎ-ՍԻՖ» (Global Partnership fund S.A., SICAV-SIF), Առևտրի և զարգացման սևծովյան բանկի (Black Sea Trade and Development Bank) ներգրավված միջոցները» բառերը փոխարինել «Միգրացիայի միջազգային կազմակերպություն»-ից (International Organization For Migration), «Կառգիլ Ֆայնանշլ Սերվիսիս Ինթերնեյշնլ Ինկ»-ից (Cargill Financial Services International Inc), «Ֆրանկֆուրտ Սքուլ Ֆայնանշլ Սերվիսիս ՋիէմԲիէյջ»-ից (Frankfurt School Financial Services GmbH), «Աթլանթիկ Ֆորֆեյթինգ էյՋի»-ից (Atlantic Forfaiting AG), «Գլոբալ Քլայմիթ Փարթներշիփ Ֆանդ էՍ.էՅ, ՍԻՔԱՎ-ՍԻՖ»-ից (Global Climate Partnership fund S.A., SICAV-SIF), Առևտրի և զարգացման սևծովյան բանկից (Black Sea Trade and Development Bank), «Ջիէլէս Օլթերնաթիվ Ինվեսթմենթս - Միկրոֆայնանսֆոնդս»-ից (GLS Alternative Investments -Mikrofinanzfonds), «IIV Միկրոֆայնանսֆոնդս»-ից (IIV Mikrofinanzfonds), «ԴիՔեյէմ էյ» (DKM A) և «ԴիՔեյէմ Բի» (DKM B) ֆոնդերից ներգրավված միջոցները» բառերով:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. նոյեմբերի 14-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 30.11.2017 թ. (ՀՀԳՏ N33 (602), 15.12.2017):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի, որն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
23 նոյեմբերի 2017 թ., N 257-Ն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՆՈՅԵՄԲԵՐ 2017)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Ըստ ապահովագրական դասերի ապահովագրավճարների, ապահովագրական հատուցումների, գործող պայմանագրերի քանակների և գործող պայմանագրերով ապահովագրական գումարների վերաբերյալ տեղեկատվությունը կազմվում և հրապարակվում է եռամսյակային կտրվածքով՝ մարտ, հունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսների տեղեկագրերում:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ statistics@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու թ յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 39

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների փոփոխություն

Գնաճ

Հիմնական ապրանքախմբերի նպաստումը գնաճին

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին ամենամեծ նպաստում ունեցող ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 42

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

ՀՀ համախառն արտաքին պարտք (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 57

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 58

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 68

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

ՀՀ ԿԲ կողմից սահմանված դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքներ

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (Գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 89
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների այլ վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 99
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 101
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 109
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում
Հաճախորդների և նրանց բանկային հաշիվների քանակը

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	2017 թ. հոկտեմբեր	2017 թ. հոկտեմբերի իրական աճի փոփոխությունը 2016 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)	2017 թ. նոյեմբեր	2017 թ. նոյեմբերի իրական աճի փոփոխությունը 2016 թ. նոյեմբերի նկատմամբ (%)
Տնտեսական ակտիվության ցուցանիշը		17.6		9.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	153179.4	16.5	153044.9	11.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	153166.7	34.7	76036.1	-2.1
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	43983.5	6.2	49746.7	6.9
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	234781.0	19.7	242043.9	22.6
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	140601.5	22.4	129020.8	17.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կՎտ/ժամ)*	567.8	-4.6	624.4	0.2
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	188524[1]	2.7[2]	187914[3]	1.6[4]

ԳՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

2017 թ.	Գնաճ	Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունը	Կապիտալ շինարարությունում գների փոփոխությունը	Գյուղատնտեսական մթերքների իրացման գների փոփոխությունը
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	2.6	-0.1[1]	-0.7	3.2
Փետրվար	-0.9	0.3[1]	2.6	0.2
Մարտ	-0.3	-0.6	-2.3	-0.5
Ապրիլ	1.0	-0.6	0.8	-0.4
Մայիս	-0.2	0.2	0.5	-3.6
Հունիս	-0.9	0.5	0.9	-11.2
Հուլիս	-2.6	0.1	-0.2	-22.0
Օգոստոս	-0.4	0.9	1.2	-20.2
Սեպտեմբեր	0.2	0.1	0.8	-13.7
Հոկտեմբեր	0.8	0.9	3.2	7.8
Նոյեմբեր	2.0	0.7	-0.3	4.7
2017 թ. հունվար – նոյեմբերը 2016 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ	0.8	3.9	-0.3	-0.4

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	2015	2016	2017	2017	2017
	նախորդ ամսվա նկատմամբ (%)			նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)
Հունվար	2.5[1]	2.2	2.6	2.6	-0.6
Փետրվար	- 0.1[1]	-1.4	-0.9	1.7	-0.2
Մարտ	-0.1	-0.3	-0.3	1.4	-0.1
Ապրիլ	-0.4	-0.3	1.0	2.4	1.2
Մայիս	-0.5	-0.7	-0.2	2.1	1.6
Հունիս	-1.4	-0.5	-0.9	1.2	1.1
Հուլիս	-2.2	-2.3	-2.6	-1.4	0.9
Օգոստոս	0.1	-0.5	-0.4	-1.8	0.9
Սեպտեմբեր	0.1	0.1	0.2	-1.7	1.0
Հոկտեմբեր	-0.4	0.5	0.8	-0.9	1.2
Նոյեմբեր	0.6	1.0	2.0	1.1	2.2
Դեկտեմբեր	1.7	1.1			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	-0.1	-1.1			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	3.7	-1.4			

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԱՅՄԲԵՐԻ ՆՊԱՍՏՈՒՄԸ ԳՆԱՁԻՆ[5]

Անվանում	2017 թ. նոյեմբերը 2017 թ. հոկտեմբերի նկատմամբ (%)	Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)
Գնաճ	**2.0**	
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք	4.2	1.73
Ալկոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	0.4	0.02
Հագուստ և կոշիկ	2.0	0.09
Կենցաղային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	0.2	0.03
Տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարանների խնամքի ամենօրյա գործունեություն	-0.2	-0.01
Առողջապահություն	0.3	0.03
Տրանսպորտ	1.4	0.10
Կապ	0.0	0.00
Հանգիստ և մշակույթ	1.5	0.02
Կրթություն	0.0	0.00
Ռեստորաններ և հյուրանոցներ	0.3	0.00
Տարբեր ապրանքներ և ծառայություններ	-0.3	-0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ[6]

ժամանակաշրջան	2015	2016	2017
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.94[2]	0.02[2]	-0.01[2]
Փետրվար	0.21[2]	-0.09	-0.04
Մարտ	-0.09	-0.11	0.25
Ապրիլ	-0.39	-0.11	0.38
Մայիս	-0.14	-0.18	0.22
Հունիս	-0.41	-0.39	-0.02
Հուլիս	-0.56	-0.27	-0.10
Օգոստոս	-0.20	-0.02	0.35
Սեպտեմբեր	0.08	0.11	0.39
Հոկտեմբեր	0.28	0.38	0.83
Նոյեմբեր	-0.13	0.02	0.73
Դեկտեմբեր	-0.12	-0.20	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.82[2]	-1.05[2]	-1.61[2]
Փետրվար	4.45[2]	-1.39	-1.24
Մարտ	4.40	-1.47	-0.86
Ապրիլ	3.83	-1.31	-0.30
Մայիս	3.50	-1.35	0.26
Հունիս	3.26	-1.45	0.68
Հուլիս	2.42	-1.23	0.89
Օգոստոս	1.93	-1.10	1.35
Սեպտեմբեր	1.55	-1.12	1.63
Հոկտեմբեր	1.35	-1.06	1.91
Նոյեմբեր	0.74	-0.92	2.78
Դեկտեմբեր	-0.54	-0.97	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻՆ ԱՄԵՆԱՄԵԾ ՆՊԱՍՏՈՒՄՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[6]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**2.78**
Միս տավարի	0.65
Օդային տրանսպորտի ծառայություններ	0.40
Կարագ	0.39
Միս խոզի	0.29
Պանիր կովի կաթից	0.19
«Իշխան» ձուկ	0.18
Ծխագլանակներ ֆիլտրով՝ հայրենական արտադրության	0.08
«Թառափ» ձուկ	0.08
Պանիր տնական	0.08
Վիրահատական ծառայություններ	0.07
Բենզին	0.06
Շաքարավազ	-0.06
Բուսական յուղ արևածաղկի	-0.07
Գազ փոխադրամիջոցների լիցքավորման համար	-0.08
Հնդկացորեն	-0.09

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*
[2] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:*
[3] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*
[4] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:*
[5] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*
[6] *Արտաքսման և ճշգրտման եղանակով հաշվարկված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	2017 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2017 թ. հունվար – հոկտեմբերը 2016 թ. հունվար – հոկտեմբերի նկատմամբ (%)	2017 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)	2017 թ. հունվար – նոյեմբերը 2016 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)
Արտահանում *(ՖՕԲ)*	1804.1	123.4	2013.8	123.5
Ներմուծում *(ՍԻՖ)*	3314.6	127.1	3770.4	128.0
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1510.5	131.7	1756.6	133.5

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2016 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	75057	24982	50075	802780	305464	497316
ԱՄՆ	16353	9294	7059	157205	76072	81133
Ուկրաինա	772	1314	-541	8370	9719	-1349
Ղազախստան	2453	354	2098	17177	4139	13038
Գերմանիա	2531	1461	1070	48122	21980	26142
Իսպանիա	733	1228	-495	8009	11353	-3343
Ֆրանսիա	2986	1454	1532	27368	13159	14209
ԱՄԷ	1973	1901	72	17108	20864	-3756
Չինաստան	316	5409	-5093	2283	50227	-47943
Թուրքիա	144	900	-756	2283	7197	-4914
Այլ երկրներ	20314	18520	1794	230603	187782	42821
Ընդամենը	**123632**	**66817**	**56814**	**1321311**	**707956**	**613354**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2017 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	91634	26727	64907	944697	336522	608176
ԱՄՆ	15337	27932	-12596	160048	164596	-4547
Ուկրաինա	837	1027	-190	8114	12109	-3995
Ղազախստան	12688	200	12489	44811	2408	42404
Գերմանիա	3013	2538	475	35106	26944	8162
Իսպանիա	933	1835	-902	8903	18373	-9470
Ֆրանսիա	2846	1197	1649	23390	13830	9560
ԱՄԷ	2812	2009	803	24470	19087	5384
Չինաստան	666	5737	-5071	4119	58180	-54061
Թուրքիա	109	931	-822	1225	8930	-7705
Այլ երկրներ	32933	25228	7704	306644	248601	58043
Ընդամենը	**163808**	**95362**	**68446**	**1561528**	**909579**	**651949**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


մլն ՀՀ դրամ

երկիր	2016 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	35900	11954	23946	384467	146767	237700
ԱՄՆ	7826	4447	3380	75463	36519	38944
Ուկրաինա	370	628	-258	4015	4661	-645
Ղազախստան	1173	169	1004	8229	1988	6241
Գերմանիա	1210	699	512	23310	10553	12757
Իսպանիա	351	588	-237	3847	5449	-1602
Ֆրանսիա	1430	696	734	13130	6315	6815
ԱՄԷ	943	910	33	8234	10020	-1787
Չինաստան	151	2588	-2437	1095	24064	-22968
Թուրքիա	69	431	-362	1098	3453	-2355
Այլ երկրներ	9719	8851	869	110538	90076	20462
Ընդամենը	**59143**	**31960**	**27182**	**633426**	**339864**	**293562**

մլն ՀՀ դրամ

երկիր	2017 թվական					
	Նոյեմբեր			Հունվար – նոյեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	44478	12973	31506	455297	162362	292935
ԱՄՆ	7443	13552	-6108	77233	79500	-2267
Ուկրաինա	406	499	-93	3913	5840	-1927
Ղազախստան	6147	97	6050	21625	1163	20462
Գերմանիա	1463	1232	230	16934	12996	3938
Իսպանիա	453	890	-437	4298	8859	-4561
Ֆրանսիա	1381	581	801	11290	6671	4619
ԱՄԷ	1364	975	389	11784	9205	2580
Չինաստան	324	2785	-2462	1988	28049	-26061
Թուրքիա	53	452	-399	591	4307	-3716
Այլ երկրներ	15994	12236	3758	147984	119844	28140
Ընդամենը	**79505**	**46271**	**33234**	**752937**	**438795**	**314141**





ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՀՈՍՔՆ ԸՍՏ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016					2017		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
Դրամական փոխանցումներ	**207.1**	**306.1**	**374.9**	**442.0**	**1330.1**	**240.2**	**335.8**	**418.9**
Աշխատողների զուտ աշխատավարձ[1]	67.9	134.6	180.3	204.2	586.9	77.9	146.2	200.2
Աշխատողների աշխատավարձ[2]	87.4	173.4	232.2	262.9	755.8	100.4	188.2	257.8
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված զուտ եկամուտներ[3]	13.5	26.9	36.0	40.7	117.1	15.5	29.2	39.9
Որպես ծառայություն դասակարգված սեզոնային աշխատողների աշխատանքների դիմաց ստացված համախառն եկամուտներ	17.4	34.6	46.3	52.4	150.8	20.0	37.5	51.4
Անձնական տրանսֆերտներ	123.8	141.6	152.4	190.9	608.7	142.2	154.6	170.0
Կապիտալ տրանսֆերտներ	2.0	3.0	6.2	6.3	17.5	4.6	5.8	8.8

[1] Զուտ աշխատավարձը/եկամուտը սեզոնային աշխատողների կողմից ստացված աշխատավարձն է/եկամուտն է՝ առանց եկամտահարկի, տրանսպորտային ծախսերի և արտերկրում կատարված այլ ծախսումների:
[2] Ներառված չեն վճարային հաշվեկշռի համար կատարված այլ լրահաշվարկները, մասնավորապես՝ ՀՀ տարածքում տեղաբաշխված անկլավային տարածքում ռեզիդենտ աշխատողների ստացած աշխատավարձերը:
[3] Արտերկիր սեզոնային աշխատանքի մեկնողների մի մասի ստացած եկամուտը դասակարգվում է ոչ թե որպես աշխատավարձ, այլ որպես ծառայությունների արտահանում, քանի որ նրանց դեպքում չկան գործատու-աշխատող հարաբերություններ: Գնահատականը տրված է 2011 թվականից՝ հիմնվելով հարցումների տվյալների վրա:

ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԱՐԺԵՔ (Ի ՆԴԵՔՍ) [1,2,3,4]

2016	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	151.2	146.3	143.9	140.5	139.8	139.4	136.9	136.0	136.5	136.9	140.8	141.4
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	273.5	269.3	267.1	263.0	264.0	264.9	266.6	266.4	268.1	268.9	274.5	274.2
2017	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	143.1	139.6	138.3	137.6	136.2	134.2	131.4	129.6	128.2	129.8	132.6	
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	271.5	268.5	268.1	265.4	263.8	263.0	263.9	261.0	259.0	261.0	261.8	

[1] 2014 թ. մայիսին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ փոփոխվել է գործընկեր երկրների սպառողական գների ինդեքսի բազիսային տարին՝ 2010=100 (նախկինում՝ 2005=100):
[2] Հաշվարկում ընդգրկված են 12 գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով, 1997=100:
[3] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:
[4] Սճը նշանակում է արժևորում:

ՀՀ ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՄՏԱՆԴԱՐՏ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԸՍՏ «ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ԿԱԶՄՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ» 6-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ)[1,2]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2016					2017		
	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան	I եռ.	II եռ.	III եռ.
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇԻՎ	**-115.9**	**-42.2**	**59.6**	**-139.6**	**-238.1**	**-88.0**	**40.2**	**3.5**
Կրեդիտ	996.5	1201.7	1528.5	1507.5	5234.3	1193.9	1536.5	1846.0
Դեբետ	1112.4	1243.9	1468.9	1647.1	5472.4	1281.8	1496.4	1842.5
Ապրանքներ և ծառայություններ	**-166.9**	**-202.1**	**-204.3**	**-442.4**	**-1015.8**	**-201.8**	**-296.8**	**-309.7**
Կրեդիտ	713.9	801.1	1047.6	937.7	3500.4	843.9	994.1	1290.9
Դեբետ	880.8	1003.3	1251.9	1380.1	4516.2	1045.7	1290.9	1600.6
Ապրանքներ	-176.3	-196.4	-216.0	-355.6	-944.4	-220.1	-296.4	-331.1
Կրեդիտ	398.2	464.7	505.3	522.5	1890.7	471.3	579.5	654.0
Դեբետ	574.5	661.0	721.4	878.1	2835.1	691.4	875.8	985.1
Ապրանքների առևտուրն ըստ վճարային հաշվեկշռի հիմքի	-198.1	-222.8	-255.6	-379.5	-1056.1	-239.3	-325.8	-345.6
Կրեդիտ	374.8	435.1	460.6	489.0	1759.5	433.4	541.8	622.5
Դեբետ	573.0	657.9	716.3	868.5	2815.6	672.7	867.6	968.1
որից՝ վերաարտահանում (կրեդիտ)	24.0	29.9	36.0	35.4	125.2	34.5	26.6	2.5
Ապրանքների վերավաճառքի գծով զուտ արտահանում (կրեդիտ)	-	-	-	-	-	-	-	-
Ոչ մոնետար ոսկի	21.8	26.4	39.6	23.9	111.7	19.2	29.4	14.5
Կրեդիտ	23.4	29.6	44.7	33.5	131.2	37.9	37.7	31.5
Դեբետ	1.6	3.2	5.1	9.6	19.5	18.7	8.3	17.1
Ծառայություններ	9.4	-5.8	11.8	-86.8	-71.4	18.3	-0.4	21.4
Կրեդիտ	315.7	336.5	542.3	415.2	1609.7	372.6	414.6	636.9
Դեբետ	306.3	342.3	530.6	502.0	1681.1	354.3	415.0	615.5
Այլ կողմերին պատկանող նյութական ռեսուրսների վերամշակման ծառայություններ	0.9	0.8	1.8	2.3	5.8	1.8	1.4	1.9
Կրեդիտ	0.9	0.8	1.8	2.3	5.8	1.8	1.4	1.9
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Ապրանքներ վերամշակման համար հաշվետու երկրում - ապրանքներ վերադարձված (կր), ապրանքներ ստացված (դբ)	0.9	0.8	1.8	2.3	5.8	1.8	1.4	1.9
Կրեդիտ	17.2	20.0	25.9	23.5	86.6	21.1	23.0	15.2
Դեբետ	16.4	19.2	24.1	21.2	80.8	19.2	21.6	13.3
Ապրանքներ վերամշակման համար արտերկրում - ապրանքներ ուղարկված (կր), ապրանքներ վերադարձված (դբ)	-	-	-	-	-	-	-	-
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ	-0.2	-0.2	-0.3	-0.2	-0.9	-0.4	-0.4	-0.2
Կրեդիտ	0.4	0.5	0.5	0.5	2.0	0.4	0.5	0.5
Դեբետ	0.6	0.7	0.8	0.8	2.9	0.8	0.9	0.8
Տրանսպորտ	-38.2	-35.7	-48.1	-57.1	-179.1	-42.2	-46.7	-49.4
Կրեդիտ	38.0	45.4	52.8	52.5	188.7	45.1	57.8	65.5
Դեբետ	76.2	81.1	100.9	109.5	367.8	87.3	104.6	114.9
որից՝ մարդատար	-7.9	-7.3	-8.3	-8.7	-32.3	-6.9	-7.3	-10.3
Կրեդիտ	3.2	5.4	6.4	4.8	19.8	3.2	5.4	6.5
Դեբետ	11.1	12.7	14.7	13.5	52.1	10.1	12.7	16.8
Բեռնատար	-29.6	-27.4	-40.5	-48.8	-146.3	-34.2	-39.9	-40.0
Կրեդիտ	31.6	37.0	41.2	43.0	152.7	38.8	47.0	52.0
Դեբետ	61.1	64.4	81.7	91.8	299.0	73.0	86.9	92.0
Այլ	-0.6	-1.0	0.7	0.5	-0.4	-1.0	0.4	0.9
Կրեդիտ	3.3	3.0	5.2	4.7	16.3	3.1	5.4	7.0
Դեբետ	3.9	4.0	4.5	4.3	16.7	4.2	5.0	6.2
Ծովային տրանսպորտ	-9.5	-10.9	-11.9	-13.8	-46.1	-11.3	-14.2	-15.1
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	9.5	10.9	11.9	13.8	46.1	11.3	14.2	15.1
Օդային տրանսպորտ	-9.6	-11.0	-20.9	-14.5	-56.0	-10.0	-12.0	-16.2
Կրեդիտ	5.5	7.2	10.5	9.8	33.0	6.8	10.7	12.8
Դեբետ	15.2	18.2	31.4	24.2	89.0	16.9	22.7	29.0
Տրանսպորտի այլ տեսակներ	-18.9	-13.8	-15.4	-28.7	-76.8	-20.9	-20.5	-18.0
Կրեդիտ	32.4	38.1	42.2	42.7	155.4	38.2	47.1	52.7
Դեբետ	51.4	51.9	57.6	71.4	232.2	59.0	67.6	70.7

1	2	3	4	5	6	7	8	9
Փոստային և սուրհանդակային ծառայություններ	-0.0	-0.0	-0.0	-0.0	-0.2	0.0	0.0	0.0
Կրեդիտ	0.1	0.1	0.1	0.1	0.2	0.1	0.1	0.1
Դեբետ	0.1	0.1	0.1	0.1	0.4	0.1	0.1	0.1
Ճանապարհորդություն	11.1	-13.5	-4.7	-92.5	-99.5	6.5	-14.2	-19.1
Կրեդիտ	190.7	184.6	362.8	229.5	967.7	219.5	234.3	418.6
Դեբետ	179.6	198.1	367.5	322.0	1067.2	213.0	248.5	437.8
Գործնական	-17.9	-25.4	-34.1	-31.2	-108.5	-21.9	-28.6	-40.5
Կրեդիտ	21.7	22.4	43.4	30.9	118.4	23.2	26.4	46.5
Դեբետ	39.6	47.7	77.4	62.1	226.9	45.1	55.1	87.0
Անձնական	29.1	11.9	29.4	-61.3	9.1	28.4	14.4	21.4
Կրեդիտ	169.0	162.2	319.5	198.7	849.3	196.3	207.8	372.1
Դեբետ	139.9	150.3	290.1	259.9	840.3	167.9	193.4	350.8
Շինարարություն	18.3	25.7	41.4	43.7	129.1	29.1	37.7	58.9
Կրեդիտ	22.3	33.4	44.3	49.6	149.6	30.0	38.3	59.5
Դեբետ	4.0	7.7	2.9	5.9	20.5	0.9	0.6	0.6
Ապահովագրություն և կենսաթոշակային ծառայություններ	-4.2	-5.7	-6.1	-7.5	-23.5	-5.9	-6.7	-6.8
Կրեդիտ	4.4	5.1	5.4	5.7	20.6	5.0	6.4	7.5
Դեբետ	8.6	10.8	11.5	13.2	44.1	10.9	13.1	14.3
Ֆինանսական ծառայություններ	-2.6	-3.6	-1.6	-3.6	-11.5	-1.1	-2.1	-1.5
Կրեդիտ	1.3	1.5	1.5	1.8	6.1	1.4	1.8	2.3
Դեբետ	4.0	5.1	3.2	5.5	17.6	2.5	3.9	3.8
Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ	32.4	35.8	39.6	41.7	149.4	43.6	42.5	46.2
Կրեդիտ	37.9	41.5	46.9	46.8	173.1	48.8	49.5	53.7
Դեբետ	5.5	5.7	7.3	5.1	23.6	5.2	6.9	7.5
Այլ գործնական ծառայություններ	-11.6	-13.2	-13.4	-13.3	-51.5	-15.7	-15.7	-11.6
Կրեդիտ	8.5	10.7	12.6	13.5	45.3	9.0	11.1	13.4
Դեբետ	20.1	24.0	26.0	26.8	96.8	24.7	26.9	25.0
Անձնական, մշակութային և զվարճանքի ծառայություններ	0.4	2.9	3.2	3.0	9.6	0.5	3.0	3.2
Կրեդիտ	3.3	4.6	5.1	5.8	18.7	3.3	4.7	5.1
Դեբետ	2.8	1.7	1.9	2.7	9.2	2.8	1.7	2.0
Պետական ապրանքներ և ծառայություններ	3.0	1.0	0.1	-3.3	0.7	2.0	0.8	-0.1
Կրեդիտ	8.0	8.4	8.5	7.2	32.1	8.2	8.8	8.8
Դեբետ	5.0	7.4	8.4	10.5	31.4	6.2	7.9	8.9
Սկզբնական եկամուտներ	**-63.3**	**30.7**	**122.1**	**134.8**	**224.2**	**-15.9**	**136.7**	**170.8**
Կրեդիտ	102.5	192.7	253.0	302.9	851.0	147.3	251.3	313.4
Դեբետ	165.8	161.9	130.9	168.1	626.8	163.2	114.6	142.5
Աշխատողների վարձատրություն	50.9	134.6	194.0	217.7	597.3	64.2	145.2	218.8
Կրեդիտ	91.8	177.8	236.6	267.4	773.7	104.8	192.7	262.3
Դեբետ	41.0	43.2	42.6	49.7	176.4	40.6	47.5	43.5
Ներդրումային եկամուտներ	-114.2	-103.9	-72.0	-83.0	-373.0	-80.1	-8.5	-48.0
Կրեդիտ	10.6	14.9	16.3	35.5	77.3	42.5	58.6	51.1
Դեբետ	124.8	118.7	88.3	118.5	450.3	122.6	67.1	99.1
Ուղղակի ներդրումներից	-49.1	-36.7	-11.0	-36.6	-133.4	-34.0	18.3	-17.1
Կրեդիտ	0.2	0.3	0.3	3.9	4.7	3.1	2.6	2.4
Դեբետ	49.3	37.0	11.3	40.5	138.1	37.0	-15.7	19.5
Եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	-41.4	-30.2	-4.6	-32.3	-108.5	-30.7	22.8	-14.2
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	41.4	30.2	4.6	32.3	108.5	30.7	-22.8	14.2
Շահաբաժիններ և գանձումներ քվազի-կորպորացիաների եկամուտներից	-0.4	-5.2	-31.9	-32.0	-69.6	-0.4	-3.8	-5.1
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	0.4	5.2	31.9	32.0	69.6	0.4	3.8	5.1
Վերաներդրված եկամուտ	-41.1	-25.0	27.3	-0.2	-38.9	-30.3	26.6	-9.1
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	41.1	25.0	-27.3	0.2	38.9	30.3	-26.6	9.1
Տոկոսավճարներ	-7.7	-6.5	-6.4	-4.4	-24.9	-3.2	-4.5	-2.9
Կրեդիտ	0.2	0.3	0.3	3.9	4.7	3.1	2.6	2.4
Դեբետ	7.9	6.8	6.7	8.2	29.6	6.3	7.1	5.3
Պորտֆելային ներդրումներից	-13.0	-12.0	-11.0	-11.3	-47.4	-13.0	-11.7	-14.9
Կրեդիտ	2.8	5.5	6.0	5.9	20.1	3.5	5.5	1.5
Դեբետ	15.8	17.5	17.0	17.2	67.5	16.5	17.2	16.4
Ներդրումային եկամուտ կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցությունից	0.1	-1.3	-0.1	-0.4	-1.6	0.1	-0.8	0.0
Կրեդիտ	0.1	0.1	0.0	0.0	0.3	0.1	0.0	0.0
Դեբետ	-	1.4	0.1	0.4	1.9	-	0.8	0.0
Տոկոսավճարներ	-13.1	-10.8	-10.9	-10.9	-45.7	-13.1	-10.9	-14.9
Կրեդիտ	2.7	5.3	5.9	5.8	19.8	3.4	5.5	1.5
Դեբետ	15.8	16.1	16.9	16.8	65.6	16.5	16.4	16.4

1	2	3	4	5	6	7	8	9
Այլ ներդրումներից	-52.1	-55.1	-50.0	-35.0	-192.2	-33.2	-15.0	-15.9
Կրեդիտ	7.6	9.1	10.0	25.7	52.5	35.9	50.5	47.2
Դեբետ	59.7	64.3	60.0	60.8	244.8	69.1	65.5	63.2
Գանձումներ քվազի-կորպորացիոն եկամուտներից	-	-	-	-	-	-	-	-
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Տոկոսավճարներ	-52.0	-55.1	-50.0	-35.0	-192.1	-33.1	-15.0	-15.8
Կրեդիտ	7.6	9.1	10.0	25.7	52.5	35.9	50.5	47.2
Դեբետ	59.7	64.2	60.0	60.7	244.6	69.0	65.5	63.1
Պահուստային ակտիվներից	-	-	-	-	-	-	-	-
Կրեդիտ	-	-	-	-	-	-	-	-
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Երկրորդային եկամուտներ	**114.3**	**129.2**	**141.8**	**168.1**	**553.4**	**129.7**	**200.3**	**142.3**
Կրեդիտ	180.1	207.9	227.9	267.0	882.9	202.7	291.1	241.7
Դեբետ	65.8	78.7	86.1	98.9	329.5	73.0	90.9	99.4
Պետական կառավարում	33.9	38.8	44.1	44.1	161.1	33.4	101.3	32.1
Կրեդիտ	48.3	56.9	64.5	67.7	237.4	53.3	122.7	58.8
Դեբետ	14.3	18.0	20.4	23.5	76.3	19.9	21.4	26.8
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈՒԿ	80.4	90.4	97.7	124.0	392.4	96.3	99.0	110.3
Կրեդիտ	131.8	151.0	163.4	199.3	645.5	149.4	168.5	182.8
Դեբետ	51.5	60.7	65.7	75.3	253.1	53.1	69.5	72.6
Անձնական տրանսֆերտներ (ընթացիկ տրանսֆերտներ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ տնային տնտեսությունների միջև)	81.7	97.1	108.2	140.0	427.1	98.9	103.4	121.4
Կրեդիտ	123.8	141.6	152.4	190.9	608.7	142.2	154.6	170.0
Դեբետ	42.0	44.5	44.2	50.9	181.6	43.3	51.2	48.6
Այլ ընթացիկ տրանսֆերտներ	-1.3	-6.8	-10.5	-16.0	-34.7	-2.6	-4.4	-11.1
Կրեդիտ	8.1	9.4	11.0	8.4	36.9	7.3	13.9	12.9
Դեբետ	9.4	16.2	21.5	24.5	71.5	9.9	18.2	24.0
2. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ	**7.4**	**7.8**	**9.1**	**10.6**	**34.9**	**11.0**	**9.7**	**13.2**
Կրեդիտ	9.7	10.7	12.8	12.7	45.8	12.1	11.3	14.7
Դեբետ	2.4	2.9	3.6	2.1	10.9	1.1	1.6	1.5
Կապիտալ տրանսֆերտներ	7.4	7.8	9.1	10.6	34.9	11.0	9.7	13.2
Կրեդիտ	9.7	10.7	12.8	12.7	45.8	12.1	11.3	14.7
Դեբետ	2.4	2.9	3.6	2.1	10.9	1.1	1.6	1.5
Պետական կառավարում	0.6	3.9	1.6	3.0	9.1	3.6	2.0	3.9
Կրեդիտ	0.6	3.9	1.6	3.0	9.1	3.6	2.0	3.9
Դեբետ	-	-	-	-	-	-	-	-
Ֆինանսական կազմակերպություններ, ոչ ֆինանսական կազմակերպություններ, տնային տնտեսություններ և ՏՏՍՈՒԿ	6.7	3.9	7.6	7.6	25.8	7.3	7.7	9.3
Կրեդիտ	9.1	6.8	11.2	9.6	36.7	8.5	9.3	10.8
Դեբետ	2.4	2.9	3.6	2.1	10.9	1.1	1.6	1.5
Զուտ վարկավորում (+), զուտ փոխառություն (-) ընթացիկ և կապիտալ հաշիվներից	**-108.6**	**-34.4**	**68.7**	**-129.0**	**-203.2**	**-77.0**	**49.8**	**16.6**
3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ	**-194.0**	**-71.6**	**-31.6**	**-138.1**	**-435.4**	**78.1**	**-117.5**	**54.6**
Զուտ վարկավորում (+), զուտ փոխառություն (-) ֆինանսական հաշվից	**-194.0**	**-71.6**	**-31.6**	**-138.1**	**-435.4**	**78.1**	**-117.5**	**54.6**
Ուղղակի ներդրումներ	**-29.1**	**-45.4**	**-107.2**	**-90.2**	**-271.9**	**-67.3**	**-29.8**	**-42.1**
Զուտ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	9.6	4.6	8.2	43.8	66.2	5.7	-6.3	6.3
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	1.4	1.3	2.5	2.6	7.7	1.1	1.5	2.7
Բաժնետիրական կապիտալ առանց վերաներդրված եկամտի	1.4	1.3	2.5	2.6	7.7	1.1	1.5	2.7
Վերաներդրված եկամուտ	-	-	-	-	-	-	-	-
Պարտքի գործիքներ	8.2	3.3	5.8	41.2	58.5	4.6	-7.8	3.6
Զուտ պարտավորությունների ստանձնում	38.7	50.0	115.4	134.0	338.1	73.0	23.5	48.4
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	47.1	82.1	66.6	27.9	223.7	76.5	-21.0	-1.5
Բաժնետիրական կապիտալ առանց վերաներդրված եկամտի	6.0	57.1	93.9	27.7	184.8	46.2	5.5	-10.7
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	6.0	57.1	93.9	27.7	184.8	46.2	5.5	-10.7
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունն ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8	9
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	-	-	-	-	-	-	-	-
Վերաներդրված եկամուտ	41.1	25.0	-27.3	0.2	38.9	30.3	-26.5	9.3
Պարտքի գործիքներ	-8.4	-32.1	48.8	106.1	114.4	-3.6	44.6	49.9
Ուղղակի ներդրողն ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունում	-6.4	33.2	3.5	70.4	100.7	7.2	78.3	57.2
Ուղղակի ներդրմամբ ձեռնարկությունն ուղղակի ներդրողի մոտ (հակառակ ներդրում)	-	-	-	0.0	0.0	-0.0	-	-
Փոխկապակցված կազմակերպությունների միջև	-1.9	-65.4	45.3	35.7	13.7	-10.8	-33.7	-7.3
Պորտֆելային ներդրումներ	**-5.4**	**-38.1**	**0.1**	**9.4**	**-33.9**	**48.2**	**-5.9**	**34.1**
Ձուլ ֆինանսական ակտիվների ձեռքբերում	2.4	7.9	-0.8	13.6	23.1	6.9	6.9	18.8
Բաժնետիրական կապիտալում և ներդրումային ֆոնդերում մասնակցություն	2.4	5.8	2.8	8.3	19.4	6.3	2.7	4.7
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-	-	-
Պետական կառավարում	-0.1	-0.1	0.4	2.9	3.1	0.7	-3.1	0.6
Ավանդային կազմակերպություններ՝ բացի Կենտրոնական բանկից	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	2.5	5.9	2.4	5.5	16.3	5.5	5.9	4.2
Պարտքի արժեթղթեր	-0.0	2.1	-3.6	5.2	3.7	0.6	4.2	14.0
Կենտրոնական բանկ	-	-	-	-	-	-	-	-
Ավանդային կազմակերպություններ՝ բացի Կենտրոնական բանկից	-0.0	2.1	-3.6	5.2	3.7	0.6	4.2	14.0
Պետական կառավարում	-	-	-	-	-	-	-	-
Այլ հատվածներ	-	-	-	-	-	-	-	-
Ձուլ պարտավորությունների ստանձնում	7.8	45.9	-0.9	4.1	56.9	-41.3	12.7	-15.3
